**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՎԻՎ/09/2025**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 05 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Արմեն Մարուխյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի փետրվարի 5-ին քննելով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Աշոտ Բաբիկի Աղաջանյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/09/2025 գործը՝

## ՊԱՐԶԵՑ

### I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով, իրականացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ներկայացման պահանջների

պահպանման և դրանում առկա տեղեկատվության ու տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի ընթացքում պարզվել է, որ Աշոտ Աղաջանյանը հաշվետու տարում Կուսակցությանը կատարել է 1,000,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն:

1.2 Հանձնաժողովը հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ուսումնասիրությամբ պարզել է, որ Աշոտ Աղաջանյանը հանդիսանում է «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձ և Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագիր (այսուհետ՝ Հայտարարագիր):

1.3 Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալների արժանահավատությունը և ամբողջականությունը պարզելու համար Հանձնաժողովը իրականացրել է Աշոտ Աղաջանյանի՝ Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում առկա տվյալների, մասնավորապես՝ դրամական միջոցների, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալների ուսումնասիրություն, ինչի արդյունքում պարզվել է, որ Տարեկան հաշվետվությամբ ներկայացված չափով Կուսակցությանը նվիրատվություն կատարելը առերևույթ չի հիմնավորվում վերջինիս կողմից հայտարարագրված տվյալներով:

1.4 Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/2003-2024 գրությամբ Աշոտ Աղաջանյանից պահանջվել է Հանձնաժողովին ներկայացնել վերջինիս կողմից 2023 թվականի մարտի 24-ին Կուսակցությանը կատարած 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ նվիրատվության՝ օրինական եկամուտներով հիմնավորված և արժանահավատ լինելը հավաստող տեղեկություններ և փաստաթղթեր՝ այդ թվում իր՝ 2023 թվականի բանկային հաշիվների քաղվածքները (բացառությամբ այն հաշիվների, որոնք հաշվետու տարում մուտքեր կամ ելքեր չեն ունեցել), ինչպես նաև ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտող տեղեկություններ (պարզաբանումներ), 2023 թվականի ընթացիկ տարեկան ծախսերի վերաբերյալ:

1.5 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/2003-2024 գրության՝ 2024 թվականի հոկտեմբերի 9-ին Հանձնաժողով է մուտքագրվել Աշոտ Աղաջանյանի պարզաբանումը և կից ներկայացված բանկային հաշվի քաղվածքը: Ներկայացված պարզաբանման և կցված փաստաթղթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ

Աշոտ Աղաջանյանը 2023 թվականի ընթացքում իր ծնողներից կանխիկ եղանակով ստացել է նվիրատվություն 1,000,000 ՀՀ դրամի չափով, սակայն նշված գումարը չի հայտարարագրել իր Հայտարարագրի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում:

1.6 Հաշվի առնելով այն, որ վերը նկարագրված արարքն առերևույթ պարունակում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ, Հանձնաժողովը, 2024 թվականի հոկտեմբերի 24-ին Աշոտ Բաբիկի Աղաջանյանին հասցեագրել է թիվ 01/3382-2024 ծանուցումը՝ այն ստանալուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին հրավիրելով ներկայանալ Հանձնաժողով՝ մասնակցելու վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը: Նշված ծանուցումը 2024 թվականի նոյեմբերի 28-ին հետ է վերադարձվել Հանձնաժողով՝ «Չպահանջված» մակնշմամբ:

1.7 2024 թվականի նոյեմբերի 27-ին Հանձնաժողովը՝ Աշոտ Աղաջանյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու գրությունը տեղադրել է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և միաժամանակ, նույն գրությունը ուղարկել է Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին և ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանին:

1.8 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 27-ի գրության՝ 2024 թվականի նոյեմբերի 28-ին Հանձնաժողով է մուտքագրվել Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանի գրությունն առ այն, որ Աշոտ Բաբիկի Աղաջանյանը 2024 թվականի նոյեմբերի 28-ին հեռախոսազանգի միջոցով ծանուցվել է Հանձնաժողով ներկայանալու մասին և էլեկտրոնային եղանակով ստացել է Հանձնաժողովի ծանուցումը:

1.9 2024 թվականի դեկտեմբերի 9-ին պատշաճ ծանուցված Աշոտ Բաբիկի Աղաջանյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 746/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով: Արձանագրության մեջ Աշոտ Աղաջանյանը նշել է, որ իր պարզաբանումները կներկայացնի գործի քննության ժամանակ:

1.10 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 8-ի թիվ 01/19-2025 գրությամբ Աշոտ Բաբիկի Աղաջանյանին է ուղարկվել 2025 թվականի հունվարի 20-ին ժամը՝ 14:30-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: 2025 թվականի հունվարի 20-ին, ժամը՝ 14:30-ի դրությամբ Հանձնաժողովում առկա չի եղել ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Աշոտ Բաբիկի Աղաջանյանի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելը հավաստող ապացույց (փոստային ծանուցագիրը ստացած լինելը հավաստող փոստային հետադարձ առաքանին): Ուստիև, 2025 թվականի հունվարի 20-ին Հանձնաժողովը որոշել է Աշոտ Բաբիկի Աղաջանյանի կողմից Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված ՎԻՎ/09/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնել և նշանակել գործի նոր քննություն:

1.11 Հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 21-ի գրությամբ ծանուցումը և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնելու որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի հիմքով ուղարկվել է վարույթի մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին, միաժամանակ 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 01/278-2025 գրությամբ ուղարկվել է վարույթի մասնակցի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան վարչական շրջանի ղեկավարին և տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (հրապարակային ծանուցման նույնականացման համար՝ 1608364) առ այն, որ 2025 թվականի հունվարի 29-ին ժամը 14:30-ին հրավիրվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության:

1.12 Ի պատասխան Հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 01/278-2024 գրության 2025 թվականի հունվարի 23-ին Հանձնաժողով է մուտքագրվել Սիսիան համայնքի ղեկավարին փոխարինող Դավիթ Հարությունյանի գրությունն առ այն, որ Հանձնաժողովի

ծանուցումն ու որոշումը էլեկտրոնային եղանակով տրամադրվել է Աշոտ Բաբիկի Աղաջանյանին:

1.13 Աշոտ Բաբիկի Աղաջանյանի ներկայությամբ 2025 թվականի հունվարի 29-ին՝ ժամը 14:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն: Աշոտ Բաբիկի Աղաջանյանի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել միջնորդություն՝ հետաձգել գործի քննությունը՝ մինչև 2025 թվականի փետրվարի 5-ը՝ վարույթի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր Հանձնաժողով ներկայացնելու համար:

1.14 Աշոտ Բաբիկի Աղաջանյանի միջնորդությունը բավարարվել է: Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 31-ի գրությամբ Աշոտ Բաբիկի Աղաջանյանին է ուղարկվել 2025 թվականի փետրվարի 5-ին ժամը 15:00-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: Նշված ծանուցումը վերջինիս կողմից ստացվել է 2025 թվականի հունվարի 31-ին:

1.15 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Աշոտ Բաբիկի Աղաջանյանի և նրա ներկայացուցիչ Նարեկ Ստեփանյանի ներկայությամբ 2025 թվականի փետրվարի 5-ին՝ ժամը՝ 15:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

## II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Աշոտ Աղաջանյանի կողմից 2025 թվականի փետրվարի 4-ին Հանձնաժողովին է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք, որի համաձայն [redacted] բնակավայրի բնակիչ Բաբիկ Մելիքսեթի Աղաջանյանը (հաշվառված՝ [redacted] համայնք, [redacted] բնակավայր, [redacted] փողոց [redacted], նույնականացման քարտ՝ [redacted], տրված՝ [redacted]թ., [redacted]-ի կողմից) 2022 թվականին ունեցել է 70 գլուխ մանր եղջերավոր և 50 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Այս պահի դրությամբ ունի 5 գլուխ մանր եղջերավոր և 10 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

2.2 2025 թվականի փետրվարի 5-ին՝ ժամը՝ 15:00-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Աշոտ Բաբիկի Աղաջանյանը հայտնել է, որ իր հայրը՝ Բաբիկ Մելիքսեթի Աղաջանյանը 2023 թվականի ընթացքում, անասնապահությունից ստացված եկամուտների հաշվին, կանխիկ եղանակով, մաս-մաս, ընդհանուր շուրջ 2,500,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն է կատարել իրեն: Աշոտ Աղաջանյանը նշել է նաև, որ նվիրատվությունները կատարվել են մինչև իր պաշտոնի ստանձման օրը՝ 2023 թվականի մարտի 26-ը, այդ իսկ պատճառով նշված նվիրատվությունները որպես եկամուտ չի հայտարարագրել, քանի որ տեղյակ չի եղել, որ մինչև պաշտոն ստանձնելը ստացած նվիրատվությունը ևս պետք է հայտարարագրեր: Ստացված նվիրատվությունների չափի վերաբերյալ իր կողմից 2024 թվականի հոկտեմբերի 9-ին և գործի քննության ընթացքում ներկայացված պարզաբանումներում առկա հակասության վերաբերյալ Աշոտ Աղաջանյանը հայտնել է, որ իրականում նվիրատվությունների չափը ընդհանուր առմամբ կազմել է շուրջ 2,500,000 ՀՀ դրամ, այլ ոչ թե 1,000,000 ՀՀ դրամ:

## III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/09/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Աշոտ Աղաջանյանը 2023 թվականի մարտի 26-ից մինչ օրս զբաղեցնում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամի պաշտոնը:

3.2 Աշոտ Աղաջանյանի Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտներ» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ, այն է, վերջինս Հայտարարագրի տվյալ ենթաբաժնում չի հայտարարագրել 2023 թվականի ընթացքում իր հորից՝ Բաբիկ Մելիքսեթի Աղաջանյանից, մաս-մաս ստացած շուրջ 2,500,000 ՀՀ դրամի չափով նվիրատվությունները, մինչդեռ Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի

համաձայն, նվիրատվության կարգով ստացված դրամական միջոցները ենթակա են հայտարարագրման:

## IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Աշոտ Բաբիկի Աղաջանյանն Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:

4.3 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ **եկամուտները՝** (…) *նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված),* (…):

4.4 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.5 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.13 Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ հայտարարագրերի լրացման կարգի խախտում են որակվում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում, հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:***

**Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների և կիրառելի իրավական նորմերի համադրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ.**

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Աշոտ Բաբիկի Աղաջանյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, որի արդյունքում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը), մասնավորապես, Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտներ» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում որպես եկամուտ չի հայտարարագրել իր հորից՝ Բաբիկ Մելիքսեթի Աղաջանյանից 2023 թվականի ընթացքում կանխիկ եղանակով, մաս-մաս, նվիրատվության կարգով ստացած շուրջ 2,500,000 ՀՀ դրամի չափով դրամական միջոցները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր

կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ եկամուտների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով չեն բացահայտվել Աշոտ Աղաջանյանի կողմից չհայտարարագրված եկամուտների վերաբերյալ հայտարարագրման ենթակա մի շարք տվյալներ, մասնավորապես՝ նշված եկամուտների աղբյուրների, եկամուտ վճարող կազմակերպության կամ ֆիզիկական անձի, վերջինիս հասցեի, ինչպես նաև եկամուտների հայտարարագրմանն առնչվող օրենսդրությամբ սահմանված պարտադիր լրացման ենթակա այլ տվյալներ: Բացի այդ, եկամուտների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով հնարավոր չի եղել բացահայտել Աշոտ Աղաջանյանի կողմից 2023 թվականի ընթացքում կատարված ծախսերի, այդ թվում՝ Կուսակցությանը որպես նվիրատվություն փոխանցված գումարի օրինական եկամուտներով հիմնավորված և արժանահավատ լինելու հանգամանքը: Այսպիսով, նշված տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության մասին:

Ինչ վերաբերվում է Աշոտ Աղաջանյանի կողմից գործի քննության ընթացքում ներկայացված այն պարզաբանմանը, որ հոր կողմից արված նվիրատվությունները որպես եկամուտ չի հայտարարագրել Հայտարարագրում, քանի որ տեղյակ չի եղել, որ մինչև պաշտոն ստանձնելը ստացած եկամուտները, այդ թվում նվիրատվությունը նույնպես պետք է հայտարարագրեր, ապա Հանձնաժողովը արձանագրում է, որ նշված պարզաբանումն անհիմն է, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ, իսկ **տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:** Նշվածից հետևում է, որ տարեկան հայտարարագրում տվյալները ենթակա են հայտարարագրման հաշվետու ողջ տարվա համար՝ անկախ պաշտոնը ստանձնելու օրվանից:

Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չեն Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Աշոտ Բաբիկի Աղաջանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200,000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական **900005001335** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Բաբիկի Աղաջանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Աշոտ Բաբիկի Աղաջանյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

**ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**